Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N19996: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Հանրային գնումների տեղեկագիր

1. Օրենսդրական զարգացումների մոնիտորինգ

Մոնիտորինգի ժամանակահատվածը՝ 2018թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը

Դիտարկվող ժամանակահատվածում իրականացվել են օրենսդրական մի շարք բարեփոխումներ, մասնավորապես փոփոխություններ են կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի տարբեր հոդվածներում, որոնց հիմնական մասը վերաբերվել է օրենքի 6-րդ՝ «Գնումների գործընթացի բողոքարկումը» բաժնում ընդգրկված նորմերին: Բացի այդ, համաձայն Ֆինանսների նախարարի մի շարք հրամանների, հաստատվել են էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման ուղեցույցը, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը և գնումները համակարգողների որակավորման շնորհմանը և շարունակական մասնագիտական վերապատրաստմանը վերաբերվող կարգեր, ինչպես նաև փոփոխություններ են կատարվել մի շարք այլ հրամաններում:

Հարկ է նշել, որ այս փոփոխությունների մի մասը կատարվել է ՀՔՀԱԿ ՀԿ-ի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա:

Պետգնումների օրենսդրական դաշտի զարգացման միտումների ուսումնասիրության շրջանակներում, ՀՔՀԱԿ ՀԿ-ի և Վրաստանի Ինֆորմացիայի ազատության զարգացման ինստիտուտի (IDFI, https://idfi.ge) հետ համագործակցության արդյունքում իրականացվել է ՀՀ պետական գնումների օրենսդրության գնահատում՝ ըստ Թափանցիկ պետական գնումների վարկանիշի մեթոդաբանության ուղեցույցի[1]:

Մեթոդաբանությունը բաղկացած է 5 խմբերի մեջ ընդգրկված 64 ցուցանիշից, որոնք գնահատում են օրենսդրական դաշտի միասնականությունը, արդյունավետությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը և ամբողջականությունը, մրցունակությունը և անկողմնակալությունը: Ցուցանիշները խմբավորվում են նաև ըստ գործընթացների՝ 1)նախամրցութային փուլ՝ գնման գործընթացները ընդհուպ մինչև գնումների հայտարարության հրապարակումը; 2)մրցութային փուլ՝ գնման գործընթացները գնումների հայտարարության հրապարակումից մինչև հաղթող մասնակցի ընտրությունը; 3)հետմրցութային փուլ՝ հաղթող մասնակցի ընտրությունից հետո գնման գործընթացները:

Հարկ է նշել, որ այս գնահատումը նախկինում իրականացվել է 2017թ. և 2018թ. գնահատման նոր արդյունքները վկայում են, որ Հայաստանը այս վարկանիշի գնահատման ընդհանրական և առանձնացված ցուցանիշներով գրանցել է որոշակի առաջընթաց:

---

[1] https://www.tpp-rating.org/page/eng/methodology
«Թափանցիկ պետական գնումների վարկանիշը՝ պետական գնումների մասին օրենսդրության և դրա կիրառման ընթացակարգի գնահատումը Եվրասիական տարածաշրջանում» ծրագիրը և իր կայքը ապահովում են միասնական ստանդարտ տարբեր երկրներում պետական գնումների մասին օրենսդրությունը գնահատելու և բարեփոխման եղանակներ առաջարկելու համար: Պետգնումների օրենսդրության գնահատումը իրականացվում է փորձագետների կողմից երկու տարին մեկ անգամ, իսկ օրենքի իրականացման գնահատումը՝ ամեն տարի:

Համաձայն Թափանցիկ պետական գնումների վարկանիշի 2017թ. գնահատման արդյունքների, 25 երկրների ցանկում Հայաստանը ընդհանրական ցուցանիշով զբաղեցրել է 22-րդ հորիզոնականը՝ 59.7% համապատասխանության միավորով, իսկ համաձայն նոր գնահատման արդյունքների Հայաստանը կգրանցի մոտավորապես 7 հորիզոնականի առաջխաղացում՝ 70.29% համապատասխանության միավորով[2]: Գնահատված երկրների ցանկում լավագույն արդյունքներ գրանցել են Ուկրաինայի և Վրաստանի պետգնումների օրենսդրությունները՝ համապատասխանաբար 86.2% և 86.1% միավորներով:
Ինչպես ցույց են տալիս արժեքային գնահատման արդյունքները, ՀՀ պետգնումների օրենսդրությունը բավական ուժեղ է օրենսդրական դաշտի միասնականության, մրցունակության և անկողմնակալության ապահովման տեսանկյունից: Չնայած նախորդ ժամանակահատվածի արդյունքների նկատմամբ որոշակի բարելավման, օրենսդրության թույլ կողմերից դեռ մնում են թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության ոչ բավարար մակարդակի ապահովումը (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Թափանցիկ պետական գնումների վարկանիշի գնահատման Հայաստանի արդյունքները (ըստ արժեքների), 2017 և 2018թթ.



Գործընթացային գնահատման արդյունքները վկայում են, որ գնման գործընթացներին վերաբերող ընդհանուր հատկանիշների և նախամրցութային փուլի գնման գործընթացների ցուցանիշներով ՀՀ պետգնումների օրենսդրությունը բավական առաջընթաց է գրանցել նախորդ ժամանակաշրջանի համեմատ (Գծապատկեր 2): Այնուամենայնիվ, հետմրցութային փուլի գործընթացների առումով ՀՀ պետգնումների օրենսդրությունը ոչ բավարար դիրքերում է:

Գծապատկեր 2. Թափանցիկ պետական գնումների վարկանիշի գնահատման Հայաստանի արդյունքները (ըստ գործընթացների), 2017 և 2018թթ.

[2] Գնահատման արդյունքները դեռ ամփոփված չեն դիտարկվող բոլոր երկրների համար:



Ամփոփելով վերոնշյալ գնահատման արդյունքները, ակնհայտ է, որ ՀՀ պետգնումների օրենսդրությունը հետ է մնում այլ երկրների օրենսդրություններից՝ թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության տեսանկյունից: Վերլուծելով այս ուղղություններում մեր օրենսդրության թերությունները և հաշվի առնելով լավագույն դիրքերում գտնվող երկրների փորձը, հնարավոր է առաջ քաշել օրենսդրության բարելավման կոնկրետ ուղիներ/լուծումներ:

<u>Թափանցիկության բարելավման տեսանկյունից</u>՝

- ✓ *Պետք է հաշվի առնել, որ ՀՀ պետգնումների օրենսդրությունը հստակ չի սահմանում տեղեկատվության հրապարակման ձևաչափը, ինչը երբեմն սահմանափակում է տեղեկատվության վերարտադրության/վերամշակման և վերլուծության հնարավորությունը*:

Այս առումով կարելի է օգտվել մի շարք երկրների փորձից, օրինակ.

- Ուկրաինայի օրենսդրությունը հստակորեն սահմանում է այն ձևաչափը, որը պետք է օգտագործվի պետական գնումների մասին տեղեկատվության հրապարակման ժամանակ: Մասնավորապես, պետգնումների օրենքի 5-րդ հոդվածը նշում է, որ դա պետք է կատարվի բաց տվյալների ձևաչափով (առանձին օրենքով սահմանված), այնպիսի ձևաչափով, որը թույլ կտա անվճար և ավտոմատ թվային եղանակով տեղեկատվության վերամշակում եւ օգտագործում:
- Կոստա Ռիկայի պետգնումների օրենքի 40-րդ հոդվածը սահմանում է, որ կենտրոնացված պետական գնումների կայքը պետք է վերարտադրի տեղեկատվությունը այնպիսի թվային ձևաչափերով, որը թույլ կտա հանրության համար տեղեկատվության բեռնումը, պատճենումը, մանիպուլյացիան եւ վերաօգտագործումը:

<u>Արդյունավետության բարելավման տեսանկյունից</u>՝

- ✓ *Հարկավոր է, որ էլեկտրոնային միջոցները դառնան պետգնումների իրականացման և պատվիրատուների և մասնակիցների հաղորդակցության հիմնական մեթոդ:*
  - Որպես օրինակ՝ Վրաստանի, Ուկրաինայի, Հունգարիայի և Լեհաստանի փորձը:
- ✓ *Հարկավոր է նաև հաշվի առնել ծախսերի արդյունավետության սկզբունքը, քանի որ ՀՀ պետգնումների օրենսդրությունը չի սահմանում այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են կյանքի ցիկլի, շրջակա միջավայրի և սոցիալական ծախսերը:*
  - Որպես օրինակ՝ Լիտվայի, Լեհաստանի, Ռումինիայի և Սլովակիայի փորձը:

<u>Հաշվետվողականության բարելավման տեսանկյունից</u>՝

- ✓ *Հարկավոր է հաշվի առնել, որ ՀՀ պետգնումների օրենսդրությունը չի սահմանում վարչական կամ քրեական պատասխանատվություն, որևէ վճարներ կամ պատժամիջոցներ օրենքի խախտման համար:*
  - Որպես օրինակ՝ Ալբանիայի, Չեխիայի, Հունգարիայի փորձը:

2. Մեկ անձից գնումների մոնիտորինգ

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ պետգնումների վերաբերյալ տեղեկատվության հիմնական և ընդգրկուն աղբյուր հանդիսացող գնումների պաշտոնական կայքից՝ gnumner.am-ից որոշակի տեղեկատվություն (օրինակ, կայացած ընթացակարգերին վերաբերվող տարբեր փաստաթղթերից և բողոքների վերաբերյալ կայացած որոշումների մասին տեղեկատվություն) ստանալը բավական բարդ և ժամանակատար գործընթաց է, և այս առումով նախորդ բաժնում նշված պետգնումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հստակ և վերարտադրության ենթակա ձևաչափի սահմանումը դառնում է առավել արդիական: Այս խնդրի լուծման շուրջ ՀՔՀԱԿ ՀԿ-ի ներկայացրած առաջարկը դրական արձագանքի է արժանացել ՖՆ ներկայացուցիչների կողմից և ակնկալվում է, որ ապագայում այս ուղղությամբ կլինի դրական տեղաշարժ:

Բացի վերոնշյալ խնդիրներից, հարկ է նշել, որ 2018թ. պետգնումների մոնիտորինգի ընթացքում գնումների հաշվետվողականության ARMEPS կայքի տվյալները պարբերաբար ենթարկվել են փոփոխությունների: Մասնավորապես, համաձայն 2019թ. փետրվարին ներբեռնված տվյալների, 2018թ. տարեկան կտրվածքով կնքվել է 14233 պայմանագիր, որի արդյունքում գեներացվել է շուրջ 180.1 մլրդ դրամի պարտավորություն: Մինչդեռ մարտի սկզբին այս նույն աղբյուրից գեներացված տվյալների համաձայն պայմանագրերի թիվը աճել է 208-ով, իսկ գեներացված պարտավորությունները շուրջ 6 մլրդ-ով: Այսպիսի փոփոխությունները իհարկե ցանկալի չեն, քանի որ ազդում են տվյալների ճշգրտության վրա և ավելորդ դժվարություններ են ստեղծում ուսումնասիրությունների ընթացքում, սակայն մյուս կողմից պայմանագրային տվյալների ավելացումը վկայում է ինչ-որ չափով հաշվետվողականության և թափանցիկության մակարդակի բարձրացման մասին, ինչը սակայն պետք է իրականացվի օրենքով սահմանված ժամկետներում:՛

Ինչպես հայտնի է, գնումների հաշվետվողականության ARMEPS կայքում ներկայացված տվյալները չեն արտացոլում պետգնումների ամբողջական պատկերը, ինչը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ պատճառներով[3], այնպես էլ որոշ դեպքերում հաշվետվողականության ոչ պատշաճ մակարդակի առկայությամբ: Համաձայն պետական բյուջեի հաշվետվությունների, 2017 և 2018թթ. ծառայությունների, ապրանքների և հիմնական միջոցների ձեռքբերման համար պետբյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ շուրջ 392.5 և 307.6 մլրդ դրամ, մինչդեռ գնումների հաշվետվողականության կայքում ներկայացված ընդհանուր գնումները կազմում են համապատասխանաբար՝ 178 և 186 մլրդ դրամ: Այսպիսով, կարելի է փաստել, որ գնումների հաշվետվողականության կայքում փաստացի տվյալների ներկայացվածության մակարդակի առումով 2018թ. (60%) գրանցվել է դրական տեղաշարժ նախորդ տարվա համեմատ (45%):

Մոնիտորինգի ընթացքում պետգնումներին վերաբերվող պաշտոնական էլեկտրոնային տեղեկատվական հարթակների ուսումնասիրությունը վկայում է, որ ի տարբերություն armeps.am/ppcm-ում տեղադրված տեղեկատվության, e-gov.am կայքի «մեկ անձից գնումներ» խորագրում տեղադրված տվյալները թերի են, երբեմն չեն թարմացվում և որոշ պայմանագրերի մասով տվյալները բացակայում են: Հաշվի առնելով այս հանգամանքը, սույն մոնիտորինգի շրջանակներում մեկ անձից կատարված գնումների վերլուծության արդյունքները հիմնված են armeps.am/ppcm-ում տեղադրված տեղեկատվություն վրա: Այսպիսով, համաձայն գնումների հաշվետվողականության ARMEPS կայքի միջոցով գեներացվող տվյալների՝ 2018թ. կնքվել են 14441 պայմանագրեր, որի արդյունքում գեներացվել է շուրջ 186 մլրդ դրամի պարտավորություն:

---

[3] Պետական գաղտնիք հանդիսացող գնումները չեն հրապարակվում կայքում և որոշ պատվիրատուների կողմից գնումներն իրականացվում են թղթային եղանակով:

2018թ. կատարվել են 5848 ոչ մրցակցային գնումներ (մեկ անձ և հրատապ մեկ անձ), ինչի արդյունքում գեներացվել է շուրջ 87.5 մլրդ դրամի պարտավորություն: Այսպիսով, 2018թ. ոչ մրցակցային գնումները քանակային առումով կազմել են ընդհանուր գնումների 41%-ը, իսկ գումարային առումով՝ 48%-ը (Գծապատկեր 3 և 4):
Նույն աղբյուրի տվյալները փաստում են, որ 2017թ. ընթացքում կատարվել են 7479 ոչ մրցակցային գնումներ (բանակցային ընթացակարգ առանց հայտարարության, մեկ անձ և հրատապ մեկ անձ) ինչի արդյունքում գեներացվել է շուրջ 87.1 մլրդ դրամի պարտավորություն: Այսպիսով, 2017թ. ոչ մրցակցային գնումները քանակային առումով կազմել են ընդհանուր գնումների 56%-ը, իսկ գումարային առումով՝ շուրջ 50%-ը (Գծապատկեր 3 և 4):
Փաստորեն, չնայած քանակապես ոչ մրցակցային գնումների մասնաբաժինը ընդհանուր գնումներում 2018թ. նվազել է 15%-ով, սակայն գումարային առումով այս գնումների մասնաբաժինը գրեթե չի փոխվել:

Գծապատկեր 3. Կնքված պայմանագրերի քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2017 և 2018 թթ.

Կնքված պայմանագրերի քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018թ.	**Կնքված պայմանագրերի քանակային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2017թ.**
	

Գծապատկեր 4. Կնքված պայմանագրերի արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2017 և 2018թթ.

Կնքված պայմանագրերի արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2018թ.	**Կնքված պայմանագրերի արժեքային կառուցվածքը ըստ գնման ընթացակարգերի, 2017թ.**





Մոնիտորինգի շրջանակներում փորձ է կատարվել տարանջատել այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված և այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային եղանակով իրականացված գնումները (Աղյուսակ 1): Որպես այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված գնումներ են դիտարկվել՝

- ✓ Առողջապահական ծառայությունների ձեռքբերումը
- ✓ Էլեկտրականության բաշխումը
- ✓ Գազի բաշխումը և սպասարկումը
- ✓ Ջրամատակարարումը
- ✓ Փոստային ծառայությունները
- ✓ Հավատարմագրային կառավարման ծառայությունները

Աղյուսակ 1. Այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված գնումների կառուցվածքը, 2018թ.

Այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված ոչ մրցակցային ուղղությունը	Մեկ անձի հիմքով կատարված ընթացակարգերի թիվը, հատ	Մեկ անձի հիմքով կատարված գնումների ծավալը, մլրդ դրամ	Մասնաբաժինը ընդհանուր գնումներում, %	Մասնաբաժինը ընդհանուր ոչ մրցակցային գնումներում, %
Առողջապահական ծառայությունների ձեռքբերում	1118	62.9	33.8	71.9
Էլեկտրականության բաշխում	103	6.9	3.7	7.9
Հավատարմագրային կառավարման ծառայություններ	1	3.3	1.8	3.8
Փոստային ծառայություններ	127	2.1	1.1	2.4
Գազի բաշխում և սպասարկում	40	1.6	0.9	1.8
Ջրամատակարարում	37	1.5	0.8	1.7

Ընդհամենը նշվածը	1426	78.3	42.1	89.5
1 մլն դրամը չգերազանցող գնումներ	4063	0.9	0.5	1

Հաշվի առնելով վերոնշյալ հաշվարկները, այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային եղանակով իրականացված գնումները արժեքային արտահայտմամբ կազմում են ընդհանուր ոչ մրցակցային/մեկ անձից գնումների մոտ 9.5%-ը կամ ընդհանուր գնումների 4.5%-ը, իսկ քանակային առումով՝ ընդհանուր ոչ մրցակցային գնումների մոտ 6%-ը կամ ընդհանուր գնումների 2.5%-ը: Հենց այս գնումների ուղղությամբ էլ կատարվել են առավել մանրամասն ուսումնասիրություններ: Այսպիսով, համաձայն ՀՔՀԱԿ ՀԿ-ի հաշվարկների, այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային եղանակով կնքվել են 359 պայմանագրեր, որի արդյունքում գեներացվել է շուրջ 8.3 մլրդ դրամի պարտավորություն:

Այլընտրանքի առկայության պարագայում այլ ոչ մրցակցային գնումներ

Մոնիտորինգի շրջանակներում փորձ է կատարվել խմբավորել այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային գնումները ըստ խոշորացված ենթաուղղությունների (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Այլընտրանքի առկայության պարագայում այլ ոչ մրցակցային ձեռքբերումները ըստ խոշորացված ենթաուղղությունների

Ոչ մրցակցային հիմքով ծախսային ենթաուղղություն	Մեկ անձի հիմքով գեներացված պարտավորությունների ծավալը, մլն դրամ	Մեկ անձի հիմքով կնքված պայմանագրերի թիվը, հատ	Մինչև 1 մլն դրամ պայման ագրային ծավալը, մլն դրամ	Մինչև 1 մլն դրամ պայման ագրերի թիվը, հատ	Ենթախմբի ըստ գնի խոշորագույն մատակարարը	Ենթախմբի խոշորագույն պայմանագրի գինը, մլն դրամ
Ներկայացուցչական ծառայություններ և միջոցառումների կազմակերպում	2531	122	180	1105	ԱԺԱՆՍ ՊՅՈՒԲԼԻԿՍ-ԳՐՈՒՊ ԷՍԼ/ՆԵՏՎՈՐԿ ընկերություն	1211
Որից ԱԳՆ՝	*1993*	*64*	*57*	*351*	*ԱԺԱՆՍ ՊՅՈՒԲԼԻԿՍ-ԳՐՈՒՊ ԷՍԼ/ՆԵՏՎՈՐԿ ընկերություն*	*1211*
ԵՔ՝	*308*	*7*			*ԷՅԴԻՎԻ ՄԵԴԻԱ ԷՍ ՍՊԸ*	*178*
ՊՆ	*112.9*	*8*	*3.7*	*11*	*«Էյչ Այ Ուայ» ՍՊԸ*	*46,5*
Տպագրական ծառայություններ	1018	30	25	129	«Զանգակ-97» ՍՊԸ	299
Վարժասարքեր	674	3	0.6	1	«Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ	650

Ծրագրային ապահովում և սպասարկում, համակարգչային ծառայությունների մատուցում	443	41	65	247	Էլեկտրոնային կառավարման ենթակառուցված քների ներդրման գրասենյակ ՓԲԸ	65
Մեքենաներ և պահեստամասեր	440	3	11	43	ԿԱՄԱԶ Արմենիա ՓԲԸ	414
Տեղեկատվական ծառայություններ	358	2	3	9	Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ	314
Ապահովագրություն	234	21	28	149	Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ	48.7
Ավտոմեքենաների վերանորոգման և տեխ.սպասարկման ծառայություններ	220	21	13	68	ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ ՍՊԸ	61.5
Անշարժ գույքի վարձակալություն	205	42	21	48	Ուրբան Լոջիստիք Սերվիսիս Տերմինալ ՓԲԸ	36.6
Հեղինակային և տեխնիկական հսկողություն	152.6	25	30	128	ООО "Комтех"	63.3
Սարքավորումների վերանորոգման ծառայություն	137	7	27	105	Ալիկանտե ՍՊԸ	42.5
Փորձագիտական ծառայություններ	106	8	5.3	23	«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ	67.3
Փաստաբանական և իրավաբանական ծառայություններ	98.5	2	1	2	Baker and McKenzie LLP	62.5
Նախագծահետազոտական և շինարարական աշխատանքներ	96	7	8	16	Կոտայքի ճանապարհների շահագործման և շինարարական ՍՊԸ	59.6
ոչ բնակելի անշարժ գույքի գնման ծառայություններ	68	1			Ընդունելությունների տուն ՓԲԸ	68
Պետհամարանիշերի ձեռքբերում	52.5	1			Բիլլ Սթոուն ՍՊԸ	52.5
Դեղորայք և լաբորատոր նյութեր, բժշկական պարագաներ	51.8	7	10.8	37	Հերմինե Փարմեց ՍՊԸ	20.6

Տրանսպորտային փոխադրման ծառայություններ (այդ թվում ավիասպասարկման)	51	10	8.1	34	ԱՁ Կարեն Ավանեսյան	22

ՀՔՀԱԿ ՀԿ-ի կողմից փորձ է կատարվել ուսումնասիրել խոշորագույն պայմանագրերի կառուցվածքը: Մասնավորապես, Հավելված 1-ում ներկայացված են այլընտրանքի առկայության պարագայում ոչ մրցակցային ձեռքբերումները, որոնք գերազանցում են 15 մլն դրամի սահմանաչափը:

Ինչպես արդեն նշվել էր, 2018թ. ոչ մրցակցային եղանակով կնքվել է 5848 պայմանագիր, ինչի արդյունքում գեներացվել է շուրջ 87.5 մլրդ դրամի պարտավորություն: Այս գնումները իրականացվել են 124 պատվիրատուների կողմից: Աղյուսակ 3-ում ներկայացված է ոչ մրցակցային հիմքով խոշորագույն գնումներ իրականացրած պատվիրատուների կառուցվածքը:

Աղյուսակ 3. Ոչ մրցակցային հիմքով հիմնական պատվիրատուները, 2018թ.

Պատվիրատուն	**Մեկ անձի հիմքով պայմանագրերի արժեքը, մլն դրամ**	**Մեկ անձի հիմքով պայմանագրերի քանակը, հատ**	**Որից այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված (օբյեկտիվ)**		**Որից ոչ օբյեկտիվ**		**Խոշորագույն ոչ օբյեկտիվ պայմանագրով հաղթողը**	**Պայմանագրերի արժեքը, մլն դրամ**
			Մեկ անձի հիմքով պայմանագրերի արժեքը, մլն դրամ	**Մեկ անձի հիմքով պայմանագրերի քանակը, հատ**	**Մեկ անձի հիմքով ոչ օբյեկտիվ պայմանագրերի արժեքը, մլն դրամ**	**Մեկ անձի հիմքով ոչ օբյեկտիվ պայմանագրերի քանակը, հատ**		
Առողջապահության նախարարություն	62760	1140	62482.4	1101	273.6	9	Ակ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ	173.5
Պաշտպանության նախարարություն	6092	64	5111.7	10	972	33	«Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ	650
Ոստիկանություն	6026	110	5475	22	536	38	Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ ՓԲԸ	65
Արտաքին գործերի նախարարություն	2187	441	0	0	2125	68	Շարմ Հոլդինգ ՍՊԸ	76.8
Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	1047	33	628.5	8	412	9	Աջակցություն դատապարտյալին հիմնադրամ	190.7
Կրթության և գիտության նախարարություն	969	41	27.9	3	936.2	16	«Զանգակ-97» ՍՊԸ	299

ԱԱԾ	857	26	814	3	38	4	«ԻՆԳՈԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ	22
ՊԵԿ	761	44	679	10	71	10	Ուրբան Լոջիստիք Սերվիսիս Տերմինալ ՓԲԸ	36.6
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	655	45	102.1	6	544	7	Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ	314
Սոցիալական ապահովության ծառայություն	650	47	533.3	5	111	16	Կրտսեր Ալեքսանյան և որդիներ ՍՊԸ	42
Երևանի քաղաքապետարան	901	184	77.5	2	787	31	ԿԱՄԱԶ Արմենիա ՓԲԸ	288/414

3. Բողոքարկման համակարգի մոնիտորինգ

Ընդհանուր առմամբ, 2018թ. մայիսի 17-ի N 567-Ն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվեց, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց թիվը պետք է լինի երկու անդամ, որոնք պաշտոնավարում են հինգ տարի ժամկետով:

Բողոքը քննելիս խորհրդի անդամը հանդես է գալիս որպես գնումների բողոքարկման խորհուրդ: Բողոքը քննվում է խորհրդի անդամի կողմից միանձնյա: Բողոքարկման խորհրդի անդամները վարույթի ընթացքում կոչվում են՝ բողոքները քննող անձ: Բողոքարկման խորհուրդը իր գործունեությունն իրականացնում է երկու ընթացակարգով.

1) Բողոքարկման ընթացակարգ, որի դեպքում քննվում են գնումների ընթացքում պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ տարբեր շահագրգիռ անձանց կողմից իրենց իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ բողոքները:

2) Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, որի դեպքում քննվում են ՀՀ Ֆինանսների նախարարության համապատասխան գրությամբ ներկայացված պահանջները:

Պետք է նշել, որ բողոքարկման համակարգում նաև ՀՔՀԱԿ կողմից բարձրաձայնված ռիսկերի կանխարգելման նպատակով Ֆինանսների նախարարի կողմից դեկտեմբերի 6-ին ստորագրվել է 600-Ն հրամանը, որը ուժի մեջ է 2018թ դեկտեմբերի 18-ից:[4]

Բողոքարկման համակարգի մոնիտորինգի համար տվյալներ համավաքագրվել են ՀՀ ֆինանսների նախարարության www.gnumner.am կայքի «Բողոքարկում» ենթաբաժնում բողոքարկման հայտարարությունների և կայացած որոշումների մասին հրապարակված տեղեկատվությունից:

Բողոքարկման խորհրդի կողմից «Սև ցուցակում» ներառելու որոշումների մոնիտորինգ

2018թ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բողոքարկման խորհրդում քննության է ենթարկվել մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (Սև ցուցակում) ներառելու 438 ընթացակարգ[5]: Հարկ է նշել, որ այս ցուցանիշը գրեթե 2.5 անգամ գերազանցում է 2017թ. ապրիլի 25-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի ցուցանիշին (178 ընթացակարգ):

Ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի, այժմ Սև ցուցակում մասնակիցներին ներառելու մասով կա միասնական մոտեցում, այն է 2 տարվա ժամկետով, մինչդեռ նախկինում այն տատանվում էր 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով: Այս հանգամանքը պայմանավորված է նաև մեր օրենսդրության ԵԱՏՄ գնումների օրենսդրության հետ ներդաշնակեցմամբ:

Մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգերի միտումների ագրեգացված վերլուծությունը ներկայացված է Աղյուսակ 4-ում:

---

4 http://gnumner.am/website/images/original/%D5%80%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80_600_%D5%86.pdf?fbclid=IwAR1ZZKBtCO6NHvT_7ibQxmeQ4E57U44rLeqBE5oIofkjlMSnrf1hU9Ff3N8

5 Առանց պետական գաղտնիք պարունակող գնումների մասով բողոքների:

Աղյուսակ 4. Մասնակիցներին Սև ցուցակում ներառելու ընթացակարգերի վերլուծություն 2017 և 2018թթ.

	2018		2017	
	Որոշումների քանակը, հատ	**Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %**	**Որոշումների քանակը, հատ**	**Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %**
Մերժվել է ցուցակում ներառումը	262	60	143	80
Բավարարվել է ցուցակում ներառումը	172	39	34	19
Առանց քննության/կասեցում	4	1	1	1
Ընդամենը	438		178	

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակից, մասնակիցներին Սև ցուցակում ներառումը բավարարելու որոշումների կշիռների մասով նախորդ տարվա համեմատ 2018թ. գրանցվել է մոտ 2 անգամ աճ, իսկ ցուցակում ներառումը մերժելու որոշումների մասով՝ մոտ 1.3 անգամ նվազում: Փաստորեն, եթե 2017թ. ցուցակում չներառելու որոշումները գերազանցում էին ցուցակում ներառելու որոշումներին մոտ 4.2 անգամ, ապա 2018թ. այս տարբերությունը այնքան էլ մեծ չէ և կազմում է՝ 1.5 անգամ: Այսպիսով, նախորդ տարվա համեմատ 2018թ. Սև ցուցակում ներառված մասնակիցների թվի առումով գրանցվել է կտրուկ աճ:

ԲԽ անդամների կայացրած որոշումների մոնիտորինգ մասնակիցներին «Սև ցուցակում» ներառելու մասով

2018թ. ԲԽ անդամ Միեր Անանյանի կողմից մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով ընդունվել է 224 որոշում, որից 134-ի մասով կայացվել են մերժման որոշումներ, 89-ի մասով՝ բավարարվման, իսկ 1 ընթացակարգ թողնվել է առանց քննության :
Նույն ժամանակահատվածում ԲԽ անդամ Էմիլ Սարգսյանի կողմից մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով ընդունվել է 214 որոշում, որից 128-ի մասով կայացվել են մերժման որոշումներ, 83-ի մասով՝ բավարարվման, իսկ 3 ընթացակարգի շրջանակներում կայացվել է ընթացակարգը կասեցվելու մասին որոշում՝ դատարանի՝ հայցի ապահովում կիրառելու մասին որոշման հիման վրա (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5. ԲԽ անդամների մասնակիցներին «Սև ցուցակում» ներառելու մասով կայացրած որոշումների վերլուծություն, 2018թ.

	Միեր Անանյանի կայացրած որոշումներ	**Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %**	**Էմիլ Սարգսյանի կայացրած որոշումներ**	**Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %**

	ի քանակը, հատ		ի քանակը, հատ	
Մերժվել է ցուցակում ներառումը	134	59.8	128	59.8
Բավարարվել է ցուցակում ներառումը	89	39.7	83	38.8
Առանց քննության/ընթացակարգը կասեցնելու որոշում	1	0.4	3	1.4
Ընդամենը	**224**		**214**	

2018թ. նախորդ տարվա համեմատ երկու անդամների մոտ նկատվում է մասնակիցներին Սև ցուցակում ներառումը բավարարող որոշումների կտրուկ աճ:
Ինչպես երևում է, երկու ժամանակաշրջանում էլ ԲԽ երկու անդամների կողմից ընդունված որոշումների մասով առկա են նույնական միտումներ: 2018թ. ԲԽ երկու անդամների մոտ մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով բողոքների 60%-ը մերժվել է, իսկ 39-40%-ը բավարարվել է, որի արդյունքում ընդհանուր առմամբ «Սև ցուցակում» հայտնվել են 149 ընկերություններ, որից 6-ը դատական որոշումների հիման վրա հետագայում հանվել են ցուցակից:

Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքարկման խորհրդի որոշումների մոնիտորինգ

2018թ. բողոքարկման խորհրդում քննության է ենթարկվել մասնակիցների կողմից ներկայացված 252 բողոք[6], որի արդյունքում բավարարվել է 124-ը կամ 49%-ը: Հարկ է նշել, որ նախորդ տարվա ապրիլի 25-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համեմատ բավարարված բողոքների մասնաբաժինը կրճատվել է 8%-ով (57%) (Աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Պատվիրատուների գործողությունների դեմ ստացված բողոքների վերլուծություն 2017 և 2018թթ.

	2018		**2017**	
	Որոշումների քանակը, հատ	**Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %**	**Որոշումների քանակը, հատ**	**Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %**
Մերժվել է	95	38	33	30
Բավարարվել է (նաև մասնակի)	124	49	62	57
Առանց քննության	33	13	14	13

[6] Առանց պետական գաղտնիք պարունակող գնումների մասով բողոքների:

Ընդամենը	252	100	109	100

ԲԽ անդամների կողմից պատվիրատուների գործողությունների դեմ ստացված բողոքների և դրանց արդյունքում կայացրած որոշումների մոնիտորինգ

2018թ. ԲԽ անդամ Միեր Անանյանի կողմից պատվիրատուների գործողությունների դեմ ստացված բողոքների հիման վրա ընդունվել է 120 որոշում, որից 51-ը մերժվել է, 57-ը՝ բավարարվել, իսկ 12-ը թողնվել է առանց քննության:
Նույն ժամանակահատվածում ԲԽ անդամ Էմիլ Սարգսյանի կողմից պատվիրատուների գործողությունների դեմ ստացված բողոքների հիման վրա ընդունվել է 132 որոշում, որից 44-ը մերժվել է, 67-ը՝ բավարարվել, իսկ 21-ը թողնվել է առանց քննության (Աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Պատվիրատուների գործողությունների դեմ ստացված բողոքների մասով ԲԽ անդամների կայացրած որոշումների վերլուծություն, 2018թ.

	Միեր Անանյանի կայացրած որոշումների քանակը, հատ	**Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %**	**Էմիլ Սարգսյանի կայացրած որոշումների քանակը, հատ**	**Մասնաբաժինը ընդհանուր որոշումներում, %**
Մերժվել է	51	43	44	33
Բավարարվել է (նաև մասնակի)	57	48	67	51
Առանց քննության	12	10	21	16
Ընդամենը	120	100	132	100

Ի տարբերություն մասնակիցներին Սև ցուցակում ներառելու որոշումների, այս դեպքում ԲԽ երկու անդամների կողմից ընդունված որոշումների մասով առկա միտումները տարբեր են: Այսպես, ԲԽ անդամ Էմիլ Սարգսյանի կողմից պատվիրատուների գործողությունների դեմ ստացված բողոքների մեծ մասը (51%) բավարարվել է և միայն 33%-ն է մերժվել: Մինչդեռ, ԲԽ անդամ Միեր Անանյանի դեպքում բավարարված և մերժված բողոքների թվի միջև տարբերությունը այնքան էլ մեծ չէ, և բավարարված բողոքների մասնաբաժինը միայն 5%-ով է ավել մերժվածների մասնաբաժնից:

Ի տարբերություն 2018թ., 2017թ. ԲԽ երկու անդամների կողմից ընդունված որոշումների մասով առկա են նույնական միտումներ:
Հարկ է նշել, որ 2018թ. պատվիրատուների գործողությունների դեմ 252 բողոքները բաշխվել են 94 պատվիրատուների վրա: Համանման 109 բողոքները 2017թ. բաշխվել են 50 պատվիրատուների վրա: Ինչպես նախորդ տարում, այնպես էլ 2018թ., ամենաշատը բողոքարկվել են ՊՆ կողմից կայացված որոշումները: 2018թ. ԲԽ անդամների կողմից ՊՆ-ի գործողությունների դեմ բողոքների մասով 53 որոշում է կայացվել, որը ավելի քան 2 անգամ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ այս որոշումների մասնաբաժինը ընդհանուր որոշումների մեջ երկու ժամանակաշրջանում էլ գրեթե նույնն է, 2018թ. կազմելով 23%, իսկ 2017թ.՝ 24% (Աղյուսակ 8 և 9):

Աղյուսակ 8. Պատվիրատուներ, ում գործողությունները առավել հաճախակի են բողոքարկվել, 2018թ.

	Պատվիրատու ում գործողությունները բողոքարկվել են	Բավ.	Մերժ.	Առանց քննության	Ընդամենը
1	ՊՆ	25	26	2	53
2	Երևանի քաղաքապետարան	11	5		16
3	ՀՀ տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն	3	5		8
4	ՀԱԷԿ ՓԲԸ	2	6		8
5	ՊԵԿ	1	4	1	6
6	Աշխատանքի և սոց. հարցերի նախ.	2	2		4
7	Գավառի քաղաքապետարան	3	1		4
8	ԵՊՀ հիմնադրամ	2	2		4
9	Եր. Մխ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան հիմնադրամ	2	1		3
	Ընդամենը նշվածը	51	52	3	106
	Ընդամենը տարեկան	111	89	31	231
	Մասնաբաժինը ընդհանուրում, %	46	58	10	46

Աղյուսակ 9. Պատվիրատուներ, ում գործողությունները առավել հաճախակի են բողոքարկվել, 2017թ.

	Պատվիրատու ում գործողությունները բողոքարկվել են	Բավ.	Մերժ.	Առանց քննության	Ընդամենը
1	ՊՆ	11	13	2	26
2	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե	5		1	6
3	Արագածոտնի մարզպետարան	3	2	1	6
4	ՀՀ տրանսպորտի, կապի և ՏՏ նախարարություն	2	1	2	5
5	Երևանի քաղաքապետարան	3	1	1	5

6	ՀԱԷԿ ՓԲԸ	1	2	1	4
7	Արարատի մարզպետարան	2		1	3
8	Վանաձորի համայնքապետարան	2	1		3
9	Երևանի հ.181 հիմնական դպրոց ՊՈԱԿ	2	1		3
	Ընդամենը նշվածը	31	21	9	61
	Ընդամենը տարեկան	62	33	14	109
	Մասնաբաժինը ընդհանուրում, %	50	64	64	56

Ինչպես երևում է աղյուսակներից, բողոքարկման հաճախակիության տեսանկյունից հաջորդ պատվիրատուները 2018թ. համար Երևանի քաղաքապետարանն է (16), իսկ 2017թ.՝ քաղաքաշինության պետական կոմիտեն (6): Ի դեպ, վերջինիս գործողություններում գրեթե մշտապես խախտվել են մասնակիցների շահերը, և 6 բողոքից 5-ը բավարարվել են:
Այսպիսով, վերոնշյալ 9 առավել հաճախակի բողոքարկված պատվիրատուներին 2018թ. բաժին է ընկնում ընդհանուր բողոքների 46%-ը, իսկ 2017թ.՝ 56%-ը:
Երկու ժամանակաշրջանում էլ, այս պատվիրատուների մասով ԲԽ երկու անդամների կողմից ընդունված որոշումների մասով առկա են նույնական միտումներ. բողոքները մեծամասամբ մերժվել են:
Պետք է նշել, որ բողոքարկման համակարգում արդարության և արդյունավետության յուրահատուկ ինդիկատոր է բողոքարկման խորհրդի կողմից ընդունված այն որոշումների մասնաբաժինը, որոնք բողոքարկվել են դատարանում: Այս մասով չնայած առկա է դատարան բողոքների թվի աճ, սակայն հարաբերական առումով այն նվազել է:

Աղյուսակ 10. Դատարանում բողոքարկված որոշումների կառուցվածքը

	2017	2018
Դատարանում բողոքարկված որոշումների թիվը	22	44
Բողոքների ընդհանուր թիվը	287	690
Դատարանում բողոքարկված որոշումների մասնաբաժինը, %	8	6

Հավելված 1

Այլընտրանքի առկայության պարագայում 15 մլն դրամի սահմանաչափը գերազանցող ոչ մրցակցային գնումների նկարագիրը, 2018թ.

Պատվիրատուի անվանումը	Ընտրված մասնակից	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Գնման առարկայի անվանում	Պայմանագրի ընդհանուր գումարը
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ	2018-03-22	Վարժասարքեր	650,000,000
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ	2018-02-26	Տեղեկատվական ծառայություններ	314,044,300
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«Զանգակ-97» ՍՊԸ	2018-04-13	Դասագրքերի տպագրման ծառայություններ	298,981,930
Երևանի քաղաքապետարան	ԿԱՄԱԶ Արմենիա ՓԲԸ	2018-12-14	բազմաֆունկցիոնալ կոմունալ ճանապարհային մեքենաներ 1	288,000,000
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Մանմար ՓԲԸ	2018-04-05	Դասագրքերի տպագրման ծառայություններ	217,746,700
ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	Աջակցություն դատապարտյալին հիմնադրամ	2018-02-22	հաց,հրազդան	190,720,000
Երևանի քաղաքապետարան	ԷՅԴԻՎԻ ՄԵԴԻԱ ԷՍ ՍՊԸ	2018-10-10	Երևանի հիմնադրման 2800 ամյակին նվիրված տոնակատարության ամփոփիչ «Գալա» համերգային ծրագիր /Հանրապետության հրապարակ/:	178,110,513
ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	Աջակցություն դատապարտյալին հիմնադրամ	2018-04-20	Հանդերձանք և անկողնային պարագաներ	169,893,455
Երևանի քաղաքապետարան	ԿԱՄԱԶ Արմենիա ՓԲԸ	2018-12-21	բազմաֆունկցիոնալ կոմունալ ճանապարհային մեքենաների մատակարարում	126,000,000
ՀՀ պաշտպանության նախարարություն	<ԱՐՄ-ԱԷՐՈ> ՓԲԸ	2018-10-24	Տեղափոխման ծառայություններ	99,997,690
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Տիգրան Մեծ հրատարակչություն ՓԲԸ	2018-04-16	Դասագրքերի տպագրման ծառայություններ	96,336,920
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Շարմ Հոլդինգ ՍՊԸ	2018-08-24	Ներկայացուցչական ծախսեր	76,785,000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	2018-08-24	Ներկայացուցչական ծախսեր	76,135,000
ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե	«Ընդունելությունների տուն> ՓԲԸ>	2018-04-05	ոչ բնակելի անշարժ գույքի գնման ծառայություններ	68,085,100
«ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե»	«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ	2018-02-14	Փորձաքննության ծառայություն	67,275,905
ՀՀ ոստիկանություն	Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ ՓԲԸ	2018-02-01	Ծրագրային ապահովման մատակարարման ծառայություններ	65,000,000
ՀՀ արդարադատության նախարարություն	Baker and McKenzie LLP	2018-12-18	Փաստաբանական և իրավաբանական ծառայություններ	62,500,000
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Էդիթ Պրինտ ՍՊԸ	2018-04-12	Դասագրքերի տպագրման ծառայություններ	61,703,950
ՀՀ ոստիկանություն	<<Տոյոտա Երևան>> ՍՊԸ	2018-06-28	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	61,500,000
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Աստղիկ Գրատուն ՍՊԸ	2018-04-05	Դասագրքերի տպագրման ծառայություններ	60,090,600
ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական	Կոտայքի ճանապարհների	2018-11-20	Ճանապարհների վերանորոգման աշխատանքներ	59,610,000

տեխնոլոգիաների նախարարություն	շահագործման և շինարարական ՍՊԸ			
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	2018-11-19	Ներկայացուցչական ծախսեր	54,790,000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ֆորմենտա ՍՊԸ	2018-05-31	Ներկայացուցչական ծախսեր	53,722,008
ՀՀ ֆինանսների նախարարություն	«ԼՍՈՖՏ» ՍՊԸ	2018-02-13	«ԳԳՕ» ծրագրային համակարգի սպասարկման ծառայություններ	53,500,000
ՀՀ ոստիկանություն	Բիլլ Սթոուն ՍՊԸ	2018-12-11	Պետհամարանիշերի ձեռքբերում	52,516,200
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ՆԱԶԱՐՅԱՆ ՔՈՒԼԻՆԳ ՍԻՍԹԵՄ ՍՊԸ	2018-08-31	Ներկայացուցչական ծախսեր	49,250,000
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ռոսգոսստրախ-Արմենիա ԱՓԲԸ	2018-01-29	Պատահարներից ապահովագրման ծառայություններ (Դժբախտ պատահարներից ապահովագրության ծառայություններ)	48,659,568
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ	2018-01-29	Պատահարներից ապահովագրման ծառայություններ (Դժբախտ պատահարներից ապահովագրության ծառայություններ)	48,651,184
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Էյչ Այ Ուայ» ՍՊԸ	2018-02-23	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	46,500,000
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	Էներգակարգաբերում ՓԲԸ	2018-07-12	ՀԱԷԿ ՓԲԸ ՏԳ-3 խողովակաշարերի, նրանց միացման տեղամասերի, հանգույցների, հիմնական մետաղի և եռակցման կարերի ստուգում չքայքայող մեթոդով	46,085,212
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	2018-02-28	Էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններ	44,120,400
ՀՀ ոստիկանություն	«ՓՎ&Գ» ՍՊԸ	2018-02-06	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	44,000,000
ՀՀ սփյուռքի նախարարություն	Զանգակ-97 ՍՊԸ	2018-04-20	Տպագրական և առաքման ծառայություններ	43,444,998
Երևանի քաղաքապետարան	Քանան Քոնաթրաքշն ՍՊԸ	2018-10-10	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	43,330,000
ՀՀ ոստիկանություն	Ալիկանտե ՍՊԸ	2018-05-10	էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայություններ	42,503,900
«Սոցիալական ապահովության ծառայություն»	Կրտսեր Ալեքսանյան և որդիներ ՍՊԸ	2018-02-15	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	42,000,000
ՀՀ ոստիկանություն	ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ ՍՊԸ	2018-07-24	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	40,000,000
«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ	ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ	2018-07-20	220կՎ «Սիփան» ՕԳ-ի թիվ 13-29 խարսխային հենարանների հատվածում ՕԳ-ի վերանորոգման աշխատանքներ	38,796,000
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	Ուրբան Լոջիստիք Սերվիսիս Տերմինալ ՓԲԸ	2018-11-21	Անշարժ գույքի վարձակալության ծառայություն	36,639,000
ՀՀ ոստիկանություն	Ա/Ձ Վարդան Ասատրյան	2018-05-29	տեսաձայնային և օպտիկական սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	36,400,000
ՀՀ արդարադատության նախարարություն	Cleary Gottlieb Steen and Hamilton LLP	2018-12-28	իրավական խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում	36,000,000
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	ŠKODA JS a.s.	2018-07-09	Արտահոսքի հայտնաբերման ինֆորմացիոն կոմբինացված տեղեկատվության համակարգի (КИСОТ) սարքեր	34,607,496
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«Արևիկ հրատարակչություն» ՓԲԸ	2018-04-17	Դասագրքերի տպագրման ծառայություններ	32,244,070

ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ալեքսանդր Հոթել ՍՊԸ	2018-08-10	Ներկայացուցչական ծախսեր	30,810,000
ՀՀ ոստիկանություն	«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ	2018-03-22	փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ	30,721,000
Երևանի քաղաքապետարան	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	2018-12-19	մշակութային միջոցառում	30,000,000
ՀՀ ֆինանսների նախարարություն	«ԼՍՈՖՏ» ՍՊԸ	2018-11-30	բյուջետավորման ձևաչափով պետական բյուջեի կազմման, կատարման և հաշվետվությունների մշակման ծրագրային ծառայություններ	30,000,000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Գոլդեն Փելիս Հյուրանոց ՍՊԸ	2018-08-10	Ներկայացուցչական ծախսեր	29,250,000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Ա/Ձ Անդրանիկ Շահբազյան Լյովայի	2018-09-13	Ներկայացուցչական ծախսեր	29,195,040
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	Акционерное общество <<Прогресс-Экология>>	2018-10-24	Ջտիչներ	28,237,680
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	«Արմենիա» հյուրանոցային համալիր ՓԲԸ	2018-08-24	Ներկայացուցչական ծախսեր	27,408,000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	2018-09-13	Ներկայացուցչական ծախսեր	27,089,280
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ՕՆԻՐԱ ՔԼԱԲ ՍՊԸ	2018-08-24	Ներկայացուցչական ծախսեր	26,985,000
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	"Բաբունի" ՍՊԸ	2018-04-26	Ուսումնաօժանդակ նյութերի /շտեմարանների/ տպագրման ծառայություններ	26,090,000
ՀՀ ազգային ժողով	Ավանզարդ Մոթորս ՍՊԸ	2018-12-26	ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար մինիավտոբուսի ձեռքբերում	26,000,000
ՀՀ ֆինանսների նախարարություն	Այյունեթվորքս ՍՊԸ	2018-07-12	էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողականության համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն	25,474,500
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	"Անդին Ա" ՍՊԸ	2018-03-28	Պարբերական հրապարակումներ՝ այդ թվում՝ <<Անդին>> ամսագիր	25,200,000
ՀՀ պետական պահպանության ծառայություն	ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ ՍՊԸ	2018-02-20	ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություն	25,000,000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Սալոն Ռեստորան ՍՊԸ	2018-10-01	Ներկայացուցչական ծախսեր	24,000,000
Երևանի քաղաքապետարան	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	2018-12-20	մշակութային միջոցառում	24,000,000
ՀՀ ոստիկանություն	ԱՁ Կարեն Ավանեսյան	2018-12-14	ուղևորափոխադրող ավտոմեքենաների վարձակալության ծառայություններ	22,126,050
ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	«ԻՆԳՈԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ	2018-02-20	ՀՀ ԿԱ ԱԱԾ կարիքների համար փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների ձեռքբերում	22,000,000
«Սոցիալական ապահովության ծառայություն»	ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ ՍՊԸ	2018-02-21	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	22,000,000
ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	«Ինվեստ սերվիս» ՍՊԸ	2018-10-18	Տարածքների վարձակալության ծառայություններ	21,150,000
ՀՀ առողջապահության նախարարություն	Հերմինե Ֆարմեց ՍՊԸ	2018-05-25	Հեպատիտ Ա պատվաստանյութ	20,631,600
Երևանի քաղաքապետարան	Պրո Սոունդ ՍՊԸ	2018-10-10	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	20,530,000
ՀՀ ոստիկանություն	<<Տոյոտա Երևան>> ՍՊԸ	2018-03-14	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	20,500,000
ՀՀ առողջապահության նախարարություն	Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի	2018-09-07	Նորմատիվ փաստաթղթերի մշակման ծառայություններ	20,000,000

	անվան առողջապահության ազգային ինստիտուտ ՓԲԸ			
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ԱՆՏԱՐԵՍ ՍՊԸ	2018-09-18	Ներկայացուցչական ծախսեր	20,000,000
ՀՀ առողջապահության նախարարություն	Արփիմեդ ՍՊԸ	2018-11-27	Առողջապահական և լաբորատոր նյութեր	19,728,480
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	Skoda JS a.s.	2018-11-12	<<<ԱԷԿ>> ՓԲԸ 2-րդ էներգաբլոկի ռեակտորի սարքավորումների նորոգումների տեխնիկական աջակցություն ՊՆՎ-2018 ընթացքում	19,702,522
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Յուքոմ ՍՊԸ	2018-09-12	Ներկայացուցչական ծախսեր	19,400,000
ՀՀ առողջապահության նախարարություն	Միկրոգեն իմունակենսաբանական բժշկական պատրաստուկների գիտաարտադրական միավորում Բաժնետիրական ընկերություն	2018-12-13	Առողջապահական և լաբորատոր նյութեր	19,378,450
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	ISH PUMPS OLOMOUC a.s.	2018-11-27	Պատասխանատու սպառիչների հովացման համակարգի 300-250-NHG-500-55-ZZD-20-09 պոմպերի պահեստամասեր (HCO COOП)	19,315,852
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ	2018-10-01	Ներկայացուցչական ծախսեր	19,195,000
ՀՀ ազգային ժողով	ԹԵՔՆՈԼՈՋԻ ԸՆԴ ՍԱՅՆՍ ԴԱՅՆԱՄԻՔՍ ՍՊԸ	2018-09-13	ՀՀ Ազգային Ժողովի կարիքների համար դյուրակիր համակարգիչների ձեռքբերում	18,720,000
ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	Երշին նախագիծ ՍՊԸ	2018-04-10	Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ	18,200,000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Գոլդեն Փելիս Հյուրանոց ՍՊԸ	2018-08-24	Ներկայացուցչական ծախսեր	18,000,000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր ՊՈԱԿ	2018-09-12	Ներկայացուցչական ծախսեր	17,421,200
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՍՊԻԿԱ ՍՊԸ	2018-07-30	դասագրքերի տպագրման ծառայություն	17,213,600
ՀՀ գլխավոր դատախազություն	ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո ՊՈԱԿ	2018-02-19	Լրացուցիչ կրթության ուսուցման ծառայություններ	17,066,100
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արմենիա» Հյուրանոցային Համալիր ՓԲԸ	2018-05-31	ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	16,140,000
ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ	2018-06-22	Հեղինակային հսկողության ծառայություններ	16,056,020
ՀՀ ֆինանսների նախարարություն	«ԼՍՈՖՏ» ՍՊԸ	2018-09-25	ՊՈԱԿ-ների հաշիվները գանձապետարան տեղափոխելու հետ պայմանավորված ծրագրային ապահովման ծառայություններ	16,000,000
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Պրոմ Էքսպո ՍՊԸ	2018-09-14	Ներկայացուցչական ծախսեր	15,888,000
ՀՀ պաշտպանության նախարարություն	ՏԻԳՎԱՆ ՍՊԸ	2018-12-19	«Դիզայնավորման և կահավորման աշխատանքների (հեռուստատաղավարի դիզայն և կահավորում)»	15,840,000
ՀՀ ոստիկանություն	Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ ՓԲԸ	2018-02-06	ծրագրային ապահովման մշակման ծառայություններ	15,815,000

ՀՀ գլխավոր դատախազություն	ՕՆԻՐԱ ՔԼԱԲ ՍՊԸ	2018-06-29	Գիշերակացով հյուրանոցային ծառայություններ	15,500,000